

“ԵՀԳԳ արևելյան երկրներում օդի որակի կառավարում” AIR-Q- GOV

“Լավագույն հասանելի
տեխնոլոգիաներից բխող
արտանետումների քանակների և
ընտրված բնագավառների
համար արտանետումների
սահմանային չափաքանակների
մշակում» պիլոտային ծրագիր

*Հավելված VI. Անցումային սխեմա
ընտրված արտադրություններում ԵՄ
2010/75 Դիրեկտիվի պահանջների
ներդրման համար*

2013թ. Մեպտեմբերի 11



This project is funded
by the European Union



And implemented
by a consortium led by MWH

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՄ 2010/75 Դիրեկտիվի պահանջների ներդրման համար անցումային սխեմայի վերաբերյալ

Համաձայն Ազգային Պիլոտային Ծրագրի առաջադրանքի, մշակվել են առաջարկություններ, ընտրված ձեռնարկություններում լավագույն հասանելի տեխնոլոգիաների ցուցանիշներին համապատասխան արտանետումների չափաքանակներ ապահովելու համար անհրաժեշտ անցումային ժամանակաշրջանի վերաբերյալ:

Այդ նպատակով վերլուծություն է կատարվել ընտրված ձեռնարկությունների տեխնոլոգիական բնութագրերի, արտանետումների փաստացի քանակների, ինչպես նաև ձեռնարկություններում առկա զարգացման ծրագրերի հիման վրա: Զուգահեռաբար “Քոնսեկոարդ” ընկերության մասնագետները ուսումնասիրել են եվրոպական տեղեկատու փաստաթղթերում (BREFs), համապատասխան մասնագիտական գրականությունում և ինտերնետ աղբյուրներում առկա տեղեկատվությունը ժամանակակից տեխնոլոգիական հանգույցների, գազափոշեմաքրման սարքավորումների և կառավարման համակարգերի վերաբերյալ:

1. Վառելիքի այրման խոշոր կայանքներ

Ներկայում Հայաստանում առկա են երեք հատ խոշոր կայանքներ, որտեղ բնական գազի հիման վրա արտադրվում է էլեկտրական էներգիա: Դրանք են՝

- Հրազդանի ՋԷԿ,
- “Հայռուսգազարդ” ՓԲԸ “Հրազդան-5” էներգաբլոկ,
- “ԵրՋԷԿ” ՓԲԸ:

Հրազդանի ՋԷԿ-ը շահագործվում է միայն պիկային շրջաններում: Այստեղ սարքավորումները հնացած են և դրանց հետագա շահագործումը աննպատակահարմար է: Անհրաժեշտ է նաև նշել, որ գոյություն ունեցող էներգետիկայի զարգացման ծրագրերում այս ՋԷԿ-ը չի հիշատակվում:

“ԵրՋԷԿ” ՓԲԸ և “Հրազդան-5” էներգաբլոկը համալրված են ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով, որոնք ունակ են ապահովել ԼՀՏ ցուցանիշներին համապատասխան արտանետումների քանակներ: Այս կայանքները ունեն մոնիթորինգի իրականացման և կառավարման համար բավարար համակարգեր: ԼՀՏ տեղեկատու փաստաթղթերի եզրակացությունների պահանջներին լիարժեք բավարարելու համար կարիք կլինի որոշակի համալրումներ իրականացնել մոնիթորինգի համակարգերում և համապատասխանեցնել բնապահպանական կառավարման համակարգերը միջազգային ընդհանուր ստանդարտների դրույթներին: Այս միջոցառումները չեն պահանջի շոշափելի ֆինանսական միջոցներ և ժամանակ: Ելնելով այս նկատառումներից “Քոնսեկոարդ”

Հավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում

ընկերությունը ընտրված ձեռնարկություններում ԵՄ 201075 Դիրեկտիվի պահանջների ներդրման համար առաջարկում է որպես անցումային ժամանակամիջոց 5 տարի:

2. Ցեմենտի արդյունաբերություն

Հայաստանում ցեմենտի արդյունաբերությունը ներկայացված է երկու խոշոր ձեռնարկություններով՝

- “Միկա-ցեմենտ” ՓԲԸ
- “Արարատցեմենտ” ՓԲԸ

Երկու գործարաններն էլ չեն համապատասխանում Եվրոպական 2010/75 Դիրեկտիվի և ցեմենտի արդյունաբերության BREF պահանջներին:

Հրազդանի ցեմենտի գործարանը (“Միկա-ցեմենտ” ՓԲԸ) կառուցվել է դեռ խորհրդային ժամանակներին և գոյություն ունեցող սարքավորումները թույլ չեն տալիս ապահովել արտանետումների BREF պահանջներին համապատասխան չափաքանակներ: Ավելին, դրանք նաև չեն ապահովում տնտեսական արդյունավետություն: Մոնիթորինգի և բնապահպանական կառավարման համակարգերը չեն համապատասխանում BREF պահանջներին:

Գործարանի արդիականացման համար անհրաժեշտ է իրականացնել ամբողջ տեխնոլոգիական շղթայի փոխարինում, որը կպահանջի մեծածավալ ներդրումներ: Սակայն ձեռնարկությունում չկան հետագա զարգացման հստակ ծրագրեր, ուստի անցումային ժամանակամիջոցի որոշման համար չկան օբյեկտիվ տվյալներ:

“Արարատցեմենտ” գործարանը կառուցվել է անցյալ դարի 90-ական թվականներին: Սակայն այստեղ էլ կան բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես՝ անարդյունավետ են փոշեկլանման համակարգերը, առկա են բազմաթիվ չկազմակերպված արտանետումների աղբյուրներ: Մոնիթորինգի և բնապահպանական կառավարման համակարգերը նույնպես չեն համապատասխանում BREF ստանդարտներին:

Հիմնական վառարանային սարքավորումները կարող են շահագործվել բավականաչափ արդյունավետ, սակայն անհրաժեշտ է հիմնովին արդիականացնել հումքի ընդունման, նախապատրաստման տեղամասերը և տեղադրել նոր ժամանակակից փոշեկլանիչ սարքավորումներ:

Կազմակերպությունում գիտակցում են արդիականացման անհրաժեշտությունը և փորձ է արվում մշակել զարգացման ծրագրեր, սակայն հստակ իրագործելի պլաններ դեռ չկան:

Երկու գործարաններում էլ անհրաժեշտ է ներդնել ժամանակակից մոնիթորինգի և բնապահպանական կառավարման համակարգեր:

Հաշվի առնելով վերը թվարկված հանգամանքները, ինչպես նաև զարգացման անորոշությունները, ցեմենտի արդյունաբերության համար առաջարկվում է 15 տարի որպես անցումային ժամանակամիջոց:

3. Գունավոր մետալուրգիա

Ներկայում գունավոր մետալուրգիայի բնագավառում Հայաստանում գործում է մեկ համեմատաբար խոշոր ձեռնարկություն՝ “Էյ Սի Փի” ՓԲԸ Ալավերդու պղնձաձուլական գործարանը: Գործարանը աշխատում է գործնականում առանց գազամաքրման համակարգի: Շահագործվում են մի քանի փոքր փոշեկլանիչ սարքավորումներ, սակայն հիմնական աղտոտիչ՝ ծծմբի անհիդրիդը արտանետվում է մթնոլորտ առանց մաքրման:

“Էյ Սի Փի” ՓԲԸ-ում քննարկվել են այս խնդրի լուծմանը ուղղված բազմաթիվ տարբերակներ, սակայն մինչ այժմ որևէ հաստատված ծրագիր չկա: Համաձայն ձեռնարկության տնօրինության պարզաբանումների խնդիրը կապված է տնտեսական նպատակահարմարության հետ: Հիմնական գործոններից մեկը՝ ցածր արտադրողականությունն է, որի պայմաններում շահավետ չէ ներդնել պահանջվող ֆինանսական միջոցներ: 7000 – 9000 տ/տարի հզորության դեպքում ծծմբի անհիդրիդի վնասագերծման բոլոր առաջարկվող լուծումները չեն ապահովի նույնիսկ միջոցների ետգնում: Պղնձի խտանյութի շուկան Հայաստանում սահմանափակ է, խտանյութի ներկրումը պահանջում է զգալի տրանսպորտային ծախսեր, ուստի արտադրողականության ընդլայնումը խիստ խնդրահարույց է: Որպես հարցի լուծում դիտարկվում է Թեղուտի հանքավայրի շահագործումը, որը կարող է ապահովել արտադրողականության կրկնապատկում: Այդ դեպքում, ըստ ձեռնարկության մասնագետների գնահատումների, հնարավոր կլինի կատարել անհրաժեշտ ներդրումներ:

Ծծմբի անհիդրիդի արտանետումների վնասագերծման համար դիտարկվում են հիմնականում ծծմբական թթվի արտադրության և հիմնային եղանակով կլանման տարբերակները:

Արտադրողականության ավելացման դեպքում, ըստ “Քոնսեկուարդ” ընկերության մասնագետների գնահատումների, անցումային ժամանակամիջոցը կարող է սահմանվել 5 տարի:

4. Ընդհանուր անցումային շրջան

Ներկայացվող Ազգային Պիլոտային Ծրագրին զուգահեռ Հայաստանում ընթացքի մեջ է “EU Twinning Project on Pollution Prevention. AM10/ENP-PCA/EN/06. Strengthening the Ministry of Nature Protection in Introducing Integrated Pollution Prevention and Control” Ծրագիրը:

Աշխատանքների համակարգման նպատակով կազմակերպվել են համատեղ աշխատանքային խորհրդակցություններ, որտեղ նույնպես քննարկվել է անցումային սխեմայի հարցը:

Թվինինգի ծրագրի տեղական և միջազգային փորձագետների կարծիքով առավել իրատեսական է 13 – 16 տարի անցումային սխեման, որը հիմնականում համընկնում է “Քոնսեկուարդ” ընկերության մոտեցումների հետ: